

## ՎՐԱՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆՁԱՏՈՒՄԸ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՑ<sup>32</sup>

### Արմեն Տեր-Գրիգորյան

Բանալի բառեր՝ Կյուրիկոն, Մովսես, Ցուրտավ, Աբրահամ, Շուշանիկ, Պարսկաստան, Սմբատ Բագրատունի, Վրկան, քաղկեդոնականություն:

602 թ. բյուզանդական կայսր Մավրիկիոսի մահը վերջ դրեց խաղաղությանը Հայաստանում և ամբողջ Մերձավոր Արևելքում: Արդյունքում, պարսից արքա Խոսրով Փարվեզը (590-628) վրեժինդրության պատրիակով պատերազմ սկսեց Բյուզանդիայի նոր կայսր Փոկասի (602-610) դեմ:

Հայաստանում ևս տեղի են ունենում պարսկա-բյուզանդական բախումներ, որոնց պատճառով երկիրը կրկին վերածվում է ռազմական քատերաբեմի, բնականաբար, կրելով տնտեսական և մարդկային մեծ կորուստներ:

Պարսից արքան Միջագետքում և Հայաստանում, ինչպես նաև հարևան շրջաններում պարսկա-բյուզանդական ռազմական գործողությունների ժամանակ Սմբատ Բագրատունուն Հայոց այրութիւնը հեռու էր պահում հայրենի երկրից: Արևմտյան ճակատում ստեղծված զինադադարի ժամանակ Խոսրովը որոշեց Սմբատ Բագրատունուն ուղարկել Հայաստան: Ստեղծված պայմաններում պարսից արքայի նման որոշումը թելադրված էր կայսրության դեմ մղված պայքարով՝ նաև դավանանքային ասպարեզում [1]:

Մինչև Հայաստան գալը՝ Սմբատ Բագրատունին գրավված էր Անաղում, Ոյեանում, Ձրեճանում և Տապարիստանում Պարսկաստանի դեմ բռնկված ապստամբությունների ճնշմամբ: Այսուհետև նա գրավված էր պետական գործերով, մասնավորապես իրեն վստահված մարզպանության հոգսերով, քանի որ պատերազմների արդյունքում այնտեղ մեծ ավերածություններ էին տեղի ունեցել: Թուրքաստանում և Դելիաստանի կողմերում գերյալ հայեր էին բնակվում, որոնք մոռացել էին սեփական զիրու ու գրականությունը և կրոնը: Հայերի հետ կային նաև կորոյաց ցեղեր, հույներ և ասորիներ: Սմբատ Բագրատունին իր վրա վերցրեց այդ կուրուսայլ հայերի լուսավորչության պատասխանատու գործը: Մերեսոք գրում է. «ի վերայ քրիստոնէիցն ծագէր լոյս մեծ Հաստատէին ի հաստատ և ուսանէին զդարութիւն և զլեզու. և հաստատէին ի կարգ քահանայութեան յաշխարիի անդ երէց ուն ի նոցանէ, որ անուանեալ կոչէր Արէ» [2]: Սմբատի ջանքերով Վրկանում ստեղծվեց առանձին Եկեղեցական թեմ, որը ավելի ընդայնեց Հայ Եկեղեցու իրավասության ոլորտները՝ ի հեծուկս նեստորականության: Հովհաննես Դրասխանակերտոցին գրում է. «Եւ ապա գերէց ուն ի նոցունց իսկ՝ Արէ անուն, Եայսկոպոս նոցա հրամայէ կացուցանել մեծի հայրապետին մերոյ Սովունքի» [3]: Այս փաստը ցույց է տալիս, որ պարսից կառավարությունը չի խոչնդուտել Սմբատի կողմից Հայոց Եկեղեցու ազդեցության ոլորտի ընդայնումը Հայաստանից դուրս գտնվող հայարնակ վայրերում [4]:

Այսպիսով՝ 8 տարի մնալով Վրկանի կողմերում, 606/607 թ. Սմբատը Խոսրով արքայի հրամանով ներկայանում է արքունիք ու մեծարքում նրա կողմից: Արքան Սմբատին ուղարկում է Հայաստան, որ նա կարգավորի երկրի ներսում ծագած խնդիրները, մասնավորապես կրոնական ասպարեզում [5]: Հայաստան գնալուց առաջ Սմբատը

<sup>32</sup> Հոդվածն ընդունվել է 15.02.2018:

Հոդվածը տպագրության է երաշխավորել պ.գ.դ., Վ.Վարդանյան:

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Խոսրով արքային խնդրում է, որպեսզի նա թույլ տա Ղվինում Եկեղեցի կառուցել և կոչել այն սուրբ Գրիգորի ամունով։ Արքան կատարում է Սմբատի խնդրանքը [6]:

Նախօրոք ինանալով Մովսես կաթողիկոսի մահվան մասին, Սմբատը Հայաստան գալուն պես նոր կաթողիկոս է նշանակում Արքահամ Ա Աղբաթանեցուն։ «Ի ժամանակու թագաւորութեանն Հռովմայեցոց Մուրկայ, եւ ի բռնակալութեան Պարսից Եւթենաւասներորդ ամի Ապրուէց-Խոսրովով արքայից արքայի, եւ ի տեղութեանն Տեարն Սմբատայ Վրկան մարզպանի Հայոց Մեծաց՝ Եկաց յԱթոր Հայրապետութեան Հայոց՝ Արքահամ։ որ էր քամաներորդ վեցերորդ ի սրբոյն Գրիգորէ, ի գավառէ(ն) Ոշտունեաց» [7]:

Սովուս կաթողիկոսը մահացել էր 604 թ., և մինչ Սմբատ Բագրատունու ժամանումը՝ Ղվինում 606 թ. Եկեղեցական ժողով էր գրումարվել, սակայն կաթողիկոսի ընտրություն չէր կայացել, այլ մի քանի կանոններ էին Մշակվել՝ հատկապես ուղղված քաղեդոնա-կանությանը հարած հոգևորականության դեմ [8]:

Սմբատի գալստյան մասին Մեթոսը գրում է. «Արդ՝ խնդրէ նա հրաման յարքայէն շինել գեկեղեցի սրբոյն Գրիգորի, որ էր ի Ղուկան քաղաքի։ Եւ վասն զի վախճանեալ էր Մովսես կաթողիկոսն Երանելի, և ոչ գոյր վարդապետ ի տեղուզն յայնմիկ՝ և ևս փութացաւ խնդրել յարքայէն հրաման։ և հասեալ հրաման յերկիր իր՝ առնէ խնդրի վասն աթոռայն մեծի, զի Կարգեսցեն ի Վերայ նորա տեսուչ խնամող Եկեղեցւոյն և առաջնորդ փրկութեան իւրոյ։ Եւ նստուցին զԱրքահամ զՈշտունեաց Եպիսկոպոսն յաթոր հայրապետութեան։ Ապա սկսան արկանել հիմն Եկեղեցւոյն։ Ժողովեաց Ճարտարապետու քարի, և կացոյց ի Վերայ նոցա հաւատարիմ գործակալս, և հրաման ետ փութանակի հասուցանել ի կատարումն» [9]:

Հենց այս ժամանակահատվածում Եկեղեցական ընդհարում է տեղի ունենում վրացիների հետ, որը անհետուանը չի մնում նաև քաղաքական ասպարեզում։ Այս ընդհարումը Երկու հարևան Երկրների միջև հարաբերությունների խզման և թշնամանքի պատճառ դարձավ։

Ինչպես գիտենք, Հայոց Եկեղեցին դեռևս 6-րդ դարում դաստապարտել էր քաղկեդոնա-կանությունն ու նեստորականություննը, մերժել նրանց հետ Եկեղեցական հաղորդակցությունը։ Արդեն 6-րդ դարի Երկրորդ կեսին՝ Ղվինի ժողովից հետո, Հայոց Եկեղեցուց անջատվելու փորձեր էին արել Աղվանից ու Սյունյաց աշխարհի Եկեղեցիներ։ Սակայն Հայոց հայրապետուների վարած քաղաքականության շնորհիվ հնարավոր եղավ այդ գործընթացի դեմն առնել։ Դրան հակառակ՝ Հայոց Եկեղեցու համար արժեքավոր կորուստ էր հարևան Վրացիների հետ Եկեղեցական հաղորդակցության Վերացումը և նրանց՝ հերետիկոս հոչակվելու փաստը, որովհետև նրանք թողել էին հայերի հին հաւատոր և ընդունել քաղկեդոնականություն։ Հայոց կաթողիկոսները Երկար ժամանակ իրենց գրություններով փորձում էին Վրաց Եկեղեցուն հեռու պահել այդ ճանապարհից և հիշեցնում էին 2 Երկրների միջև եղած կրոնական կապը, բայց այդ փորձերը անհաջող էին անցնում [10]:

Հայոց և Վրաց Եկեղեցիների բաժանման գործում մեղքի մեծ բաժինը ուներ Վրաց կաթողիկոս Կյուրիինը։ Ներսես Ակիմյանը գրում է, որ Կյուրիինը ծնվել է Զավախսքում, մոտավորապես 560-570 թ.: Նա ազգությամբ վրացի էր և լավ տիրապետում էր հայերներին։ Կյուրիինը 570-ականներին տեղափոխվում է Փոքր Ասիայում գտնվող Նիկոպոլիս Եպիսկոպոսանիստ քաղաք։ Այնտեղ նա հունական կրություն է ստանում, ապա նաև Եկեղեցական կոչում [11]։ Ուխտանեար գրում է. «Եւ Երթեալ յերկիրն Հռոմոց քանակեցաւ անդ ամս հնգետասան ի գաւառին՝ որ կոչի Կողոնիայ. Եւ բնակի անդ ի մեծ քա-

## ՄԵԽՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

ղաքագեղն Նիկոպոլիս կոչեցեալ՝ յեզր գետոյն՝ որ կոչի Գայլ: Եւ վարժեալ եւ ուսեալ գդպրութիւն նոցա եւ զայլ եւս չարարուեստ գիտութիւն, որով որոշեցաւ ի մէնջ» [12]:

593 թ. Կյուրիհոնը Նիկոպոլիսից գնում է Ղվին և ընդունվում Հայոց կաթողիկոսարան: Նա իր բնավորության և աստվածաբանական իմացությունների շնորհիկ կարողանում է շահել Հայոց կաթողիկոս Մովսես Եղվարդեցու վստահությունը և Եկեղեցական ծառայության մեջ շատ արագ քայլերով առաջ է գնում [13]: 5 տարի անց (598/599) մահանում է Վրաց կաթողիկոսը, և վրաց իշխանները, իրենց սովորության համաձայն, զայիս են Հայոց կաթողիկոսի մոտ ու իրենց երկրի համար նոր հոգևոր առաջնորդ են խնդրում: Մովսեսը Կյուրիհոնին կաթողիկոս է ձեռնադրում և ուղարկում է Վրաստան [14]: Եւ կացեալ ի նմին ամս իհնաց. ապա ընդ այն ժամանակս մեռանի Կաթողիկոսն Վրաց: Եւ առաքեն իշխանք աշխարհին եւ նախարարքն հանդերձ Եպիսկոպոսաւքն առ Մովսես Կաթողիկոսն Հայոց՝ խնդրել իրեանց առաջնորդ: ... ձեռնադրէ զԿիրոն՝ որպէս յառաջն ասացաք՝ իւր համարելով զնա, իբր թէ հաւատարիմ զնա վարկանելով եւ միամիտ ի դրան իւրում, անգիտացեալ զծածուկ նորա սրտինէ [15]:

Կյուրիհոնի կաթողիկոսության 3-րդ տարում (601 թ.) Վրաստան ժամանեց նրա երբեմնի ուսումնակից Կիսր, որը Պարսկաստանից էր: Նա Բյուզանդիայում ընդունել էր քաղկեդոնականություն, ապա Կյուրիհոնի կողմից Վրաստանում եպիսկոպոս էր ձեռնադրվել: Վյո հոգարականի ազդեցությունը Կյուրիհոնի վրա մեծ էր: Վերջինս, մինչ Կիսր Վրաստան զայր, արդեն «ներկած էր երկարնակների գոյնով», իսկ Կիսր ազդեցությունից հետո էլ ավելի ամրապնդեց այն: Կիսր սատարում էր նաև Վրաստանում նեստորականության տարածմանը, և այդ պատճառով Մովսես կաթողիկոսը նամակներով փորձում էր Կյուրիհոնին ետ պահել Կիսրի հովանավորելուց՝ հորդորելով նրան պայքարել նեստորականների դեմ: Սակայն Կյուրիհոնը խորամանկ պատասխանով կարողացավ հավատացնել Մովսես կաթողիկոսին, որ ինքը հավատարիմ է հայ-վրացական դավանական միությանը և անհանդուրժող է նեստորականության հանդեպ [16]: Մովսես Եղվարդեցին այդ կապակցությամբ Կյուրիհոնին գրում է. «Եւ փախիր անչափ հեռաւորութեամբ ի պիտօ ժողովոյն Քաղկեդոնի եւ յանընդունակ տոնմարէն լեւոնի. Եւ նզովեա՝ զամենայն հերձուածողսն զառաջինսն և զմիջինսն և զվերջինսն, զոր սուրբ հարքն նզովեցին, եւ մեք նզովենք. Եւ բա յօ զամենայն չար ի միջոյ: ... Արդ զխուժիկն զայն հալածեա՝ յերկոր քումնէ եւ յաշխարհէ, զի մի դարձեալ արմատ դառնութեան ի վեր երեւեալ, եւ նովալ բազումք պիտօսին: ... Արդ զայսոսիկ ի բազում վշտաց եւ ի մեղութենէ սրտի գրեցի առ քեզ, քանզի սէրն Աստուծոյ ստիպէ զմեզ խաւել գրանս ծշմարտութեան՝ որ վասն Նորա» [17]: Ազնիայտ երևում է, որ Մովսեսի նամակում Կյուրիհոնին ուղղված հորդորները ենում էին երկու Եկեղեցիների դավանական միության փաստից: Իսկ կեղծավոր Կյուրիհոնը իր պատասխան նամակում գրում էր. «Զքուղքս ձեր՝ զոր գրեալ էիք ընկալաք եւ հասու եղաք: Եւ զպատգամս՝ զոր արարեալ էիք՝ լսեցաք յեպիսկոպուտս. Եւ որ գրով եւ բանի հոգացեալ էիք զմեզ խրատական եւ վարդապետական բանիւ, նա եւ յանդիմանեալ էիք որպէս տէր եւ վարդապէտ եւ հայր հոգեւոր, որպէս եւ էք իսկ, երկիր պազի եւ շնորհակալ եղէ ձեր հոգեւոր սիրոյդ: ... Իսկ վասն խուժիկն էիք հաստատեալ գիրաման ձեր գրով եւ բանիւ. Որպէս գրեցաք վերագոյն, վաղ մերժեցաք զնա ի մէնջ, եւ հրամայեցաք մերոց ոչ ընդունել զնա: Այլ մեք յամենայնի հնազանդ եմք ձեզ եւ ձերոց հրամանացդ» [18]: Ամեն դեպքում, ի սկզբանե տարօրինակ էր այն երևույթը, որ Մովսես կաթողիկոսը, լինելով հակաքրուգանդական և հակաքաղկեդոնական գործիչ, տեղյակ լինելով, որ Կյուրիհոնը ստացել է բյուզանդական կրթություն և բնակվել է քաղկեդոնականների մեջ, այնուամենայնիվ, նրան իր հովանու ներքը վերցրեց:

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Մովսես Կաթողիկոսի մահից հետո Կյուրիոնը ակնհայտ դեմ դուրս եկավ Հայոց Եկեղեցու դավանանքին: Նրա այս քայլը, անկասկած, նաև քաղաքական միտում ուներ, քանի որ Արևելյան Վրաստանի թագավորության կորստից հետո վրացիները իրենց կողմնորոշումը փոխել էին դեպի հավատակից Բյուզանդիան [19]:

Մովսես Կաթողիկոսի մահից հետո 604 թ. Կաթողիկոսի տեղապահ նշանակվեց Վրթանես Քերթողը: Վրթանեսի հանդեպ Կյուրիոնի ամենազանությունը հավանաբար կրկին քաղաքական ակունքներ ուներ: Վրթանեսը Սմբատ Բագրատունու մտերիմ խորհրդականն էր, հետևաբար գտնվում էր նրա և Սասանյան արքունիքի հովանավորության ներքո [20]:

Այսպիսով, Քաղկեդոնական Եկեղեցին գուխ բարձրացրեց Վրաստանում: Կաթողիկոսանիստ Սցխեթի հրավասությանը Ենթական 35 Եպիսկոպոսներից միայն մեկը շարունակեց պահպանել Հայոց Եկեղեցու հետ դավանակցությունը: Այդ Եպիսկոպոսը Ցուրտավի հայագիտ Մովսեսն էր [21]:

Ցուրտավը հայ-վրացական խառը բնակչություն ուներ և այնտեղ էր գտնվում Երկու ժողովուրդների կողմից սրբացված ս. Շուշանիկի գերեզմանը, որը նոյնինկ երկու Եկեղեցիների բաժանումից հետո շարունակեց մնալ հայ և վրաց ժողովուրդների սրբավայրը: Ցուրտավի Եկեղեցում պահպանվեց հայերենով ժամերգությունը, որը մտցրել էր Շուշանիկը և դարձ Երկրորդ կեսին: Բայց Ցուրտավի Եպիսկոպոս Մովսեսն իր հակաքաղեդոնական ուղեգիտ պատճառով հալածվեց Կյուրիոնի ու նրա համախոհների կողմից և ստիպված հեռացավ այնտեղից: Նա ապաստանեց Հովհաննավանքում, որը Այրարատի մենաստաններից մեկն էր և այնտեղից շարունակեց պայքարը Կյուրիոնի ու նրա հետևորդների դեմ: Մովսես Եպիսկոպոսը քաջատեղյակ էր Վրաստանում ստեղծված հավանական խմբումներին և այդ պատճառով հմարավոր համարեց նաև վրացի իշխանների միջամտությունը: Մովսեսը Վրթանես Քերթողին ուղղված իր Երկրորդ նամակում հորդորում էր դիմել վրացի իշխաններին: Վրթանեսը գիտեր, որ վրացի իշխանների վրա կարող է ազդեցություն ունենալ Սմբատ Բագրատունին, և Մովսեսին ուղղված իր պատասխան նամակում գրեց, որ ճիշտ կինը, որ նա իր մերձավոր վրացի իշխաններին համոզի, որ նրանք գրեն Սմբատ Բագրատունուն, հուսալով, որ այդ կերպ կարելի է շոշափելի արդյունքների հասնել [22]: «Ապա թէ յերկարէ ինչ յամառութիւն ուրացողացն, պատուիր տու՛ք ծանալիից ծերոց եւ սիրելեաց իշխանաց՝ որ գրեն առ փառաւորեալ իշխանն աշխարհին մերոյ. Որ մեզէն իսկ Երթամբ հրամանաւ սոց» [23]:

Վրթանեսը նույնը հորդորեց նաև վրաց Պետրոս Եպիսկոպոսին, որը հոգևորականության մեջ մեծ հեղինակություն ուներ: Սակայն Կյուրիոնը, ստանալով վրաց քաղկեդոնամետ իշխանների ու հոգևորականների աջակցությունը, կարողացավ չեղարկել Վրթանես Քերթողի ձեռնարկումները [24]:

Հայաստանում Վրաց և Հայոց Եկեղեցիների միջև կապը կատարյալ էր, և այս դեպքից դեռ հարյուր տարի առաջ Վրաց կաթողիկոսը մասնակցություն է ունենում Ղվինի և Եկեղեցական ժողովին և մերժում քաղկողոնականությունը: Այս դեպքը ապացույցն էր այն բանի, որ Վրաց կաթողիկոսությունը ստորադաս դիմում էր գրավում Հայոց կաթողիկոսի նկատմամբ: Իսկ այդ դրությունը վերջիվերջո պետք է առաջ բերեր ազգային արժեքների հրավատության հարցը, որ իր մեջ միշտ ընդհարման վտանգ էր կրում [25]:

Քրիստոնեության ընդունումից հետո Հայոց Եկեղեցին միշտ էլ իր ազդեցությունն է ունեցել Վրաստանում: Այս մասին մեզ հիշեցնում են «Գիրք Թմրաց»-ում տեղ գտած նամակագրությունները: Անգամ VI-րդ դարում Հայոց Եկեղեցու ազդեցությունն ու հեղինակությունը այն աստիճան մեծ էր Վրաց և Աղվանից Եկեղեցիների նկատմամբ, որ

## ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Պրոկոպիոս Կեսարացին գրում էր. «Քրիստոնյաների քահանայապետին այստեղ հունարենով կաթողիկոս են անվանում, որովհետև նա այս վայրերում ապրողների միահետան վերակացուն է»[26]:

Գրիգորի անունն արծարծվում է հավասարապես որպես և՝ հայոց և՝ Վրաց Լուսավորիչ: Կյուրինին հղված Վրանես Քերթողի թղթում կարդում ենք. «...մի եղիցի նորոգածեւութիւն հաւատոյ ի մէջ երկուց աշխարհաց, որ սքանչելի հիմնադրութեամբ տնկեցաւ յանզանգիտող և ի քաջ նահատակվէն Տեառն ի սրբոյն Գրիգորէ» [27]: Գրիգոր Լուսավորիչը քրիստոնյա առաջին քահանաներից ու ծեռնադրված եպիսկոպոսներից ուղարկեց նաև Վիրք և Աղվանիք: Վրաց և աղվանից եպիսկոպոսների ծեռնադրությ հայոց հայրապետներից, շարունակվում է նաև եետագայում՝ Լուսավորչի հաջորդների կողմից: Փափստու Բուզանդը այս մասին գրում է. «...Գրիգորի եպիսկոպոսի, որդույ Վրանայ, Եղբօրն Յուսկան, որ կաթողիկոսն էր կողմանցն Վրաց և Աղուանից» [28]:

Գրիգոր Լուսավորչի գործունեությունը քրիստոնեության տարածման մեջ ամբողջ կովկասյան տարածաշրջանում հիշատակված է Հայոց կաթողիկոսի տեղապահ Վրանես Քերթողի՝ Մովսես Ցուրտավացուն գրած նամակի պատասխանում. «...յիշեցանելով սուրբ և գուշի հաւատն գոր մեծին սրբոյն Գրիգորի սերմանեալ էր յայս ի Կաւկասային կողմանս» [29]:

Վրաց Եկեղեցու քաղեկողնականացումը մեծ խնդիր էր նաև Սասանյան Պարսկաստանի համար, քանի որ Վրաստանը նրա տիրապետության ոյորուում էր: Պարսից արքունիքը Վրկանի մարզպան Սմբատ Բագրատունուն հանձնարարեց գորակցել Հայոց Եկեղեցուն՝ քաղեկերոնականության դեմ նրա մղած պայքարում: Սմբատը հավանաբար Հայաստան ժամանեց 607 թ. գարնանը: Պարսից դուռը ցանկանում էր հնարավորինս հզրուացնել Հայոց Եկեղեցին և այն վերածել Բյուզանդիայի դեմ հոգնոր-քաղաքական պատվարի: 607 թ. Սմբատ Բագրատունու հրամանով Ղվինում Եկեղեցական ժողով գումարվեց. «Եւթուտաներորդ ամի Ասպրուեզ Խոսրովու արքայից արքայի, յանսեանն մարերի...» [30]: Այս ժողովը բխում էր նաև պարսից վերնախսակի պետական շահերից: Սմբատի միջոցով պարսից արքունիքը հուս ուներ կարգավորել Հայոց Եկեղեցու և Պարսկաստանի միջև եղած հարաբերությունները: Սմբատ Բագրատունին և պարսից վերնախսակը հակած էին այն մտքին, որ եթե Հայոց Եկեղեցին պահպանի համաքրիստոնեական նախնավանդ հավատքը, ապա անխուսակելուրեն հակադրվելու է Քաղեկերնական Եկեղեցուն, դրանով իսկ՝ Բյուզանդական կայսրությանը: Սասանյանները այս կերպ փորձում էին հայերին հնարավորինս հեռացնել Բյուզանդիայից [31]:

Սմբատի շնորհիվ Հայոց Եկեղեցու շուրջը համախմբվեցին Հայաստանի հոգնոր և քաղաքական գործուն ուժերը: Նրա միջամտությամբ էր, որ Սյունիքի եպիսկոպոսական աթոռը, որը երկար ժամանակ խցել էր նվիրապետական կապերը Ղվինի Մայր աթոռից, վերականգնեց դրամբ և ընդունեց Հայոց կաթողիկոսի գերազահությունը՝ իր Եպիսկոպոսին Ղվին ուղարկելով [32]: Ըստ Ուխտանեսի՝ ժողովին մասնակցում էին նաև հայ նախարարները, քանի որ այդ ժողովը պետք է լուծեր ոչ միայն Եկեղեցական, այլև երկրի պետական-քաղաքական ոլորտներին արնչվող բազմաթիվ խնդիրներ. «Յետ կարգելոյ զկանոնն միազոյգ հաւանութեամբ եւթն սահմանեալ գլխով եւ բարեծել կարգաւք, զոր հաստատեցին ի շնորհաց Սուլը Հոգույն, ապա դարձեալ միւսանագամ ժողովին հրաւիրեալք ի Հոգույն Սրբոյ: Քանզի գրէ Սմբատ Վրկան մարզպան հրովարտակ հաներձ իշխանաւք աշխարհին եւ նախարարաւք Հայոց գալ ժողովեալ ի ժամադրեալ տեղին՝ ի հոյակապ եւ յականաւոր եւ ի հոչակաւոր մեծ մայրաքաղաքն Հայոց Մեծաց Ղուին կոչեցեալ» [33]:

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Դվինի 607 թ. ժողովը ամրակայեց նաև Հայոց Եկեղեցու նվիրապետական հիմքերը՝ ի հեճուկս Քաղկեդոնական Եկեղեցու: Վերջինս փորձում էր ժխտել Հայ Եկեղեցու նվիրապետական ինքնուրույնությունը՝ ինչպես այն փաստի վրա, որ Բյուզանդական Եկեղեցին ուներ հոգևոր պաշտոնյաների ինն աստիճան, մինչդեռ Հայոց Եկեղեցում Արևելքի քրիստոնեական մյուս Եկեղեցիների պես դրանց թիվը չէր անցնում չորսից (քահանա, սարկավագ, դպիր, ընթերցող): Հայոց Եկեղեցում եպիսկոպոսությունը միաստիճան էր, այն դեպքում, երբ Բյուզանդական Եկեղեցում այն ուներ քառաստիճան բաժանում (Եպիսկոպոս, մետրոպոլիտ, արքեպիսկոպոս և պատրիարք): Բյուզանդական կղերը երկորոդական նշանակություն ունեցող այս փաստը դարձրին Եկեղեցաբանական պայքարի թիրախ և ժխտեց Հայոց Եկեղեցու՝ նախնական լինելու իրողությունին նրան համարելով ոչ կատարյալ հոգևոր հաստատություն: Ըստ այդմ՝ Հայ Եկեղեցու առաջնորդը պետք է կոչվեր ոչ թե կաթողիկոս, այլ մետրոպոլիտ, որը, սակայն, չպետք է համագոր լիներ պատրիարքին: Այս խնդիրը հրատապ դարձավ հենց Դվինի 607 թ. ժողովի ժամանակը: Անենայն հավանականությամբ, հենց այս ժողովի ժամանակ որոշվեց Հայոց Եկեղեցու հոգևոր աստիճանները հասցնել ինմի: Հայոց Եկեղեցու առաջնորդը հրչակվեց պատրիարք, Արքանքի Եկեղեցունը՝ արքեպիսկոպոս, Սյունիքի Եկեղեցու գլուխը՝ մետրոպոլիտ: Հայոց Եկեղեցու նախորդող կարգը, որ մինչ այդ միաստիճան էր, այժմ դարձավ քառաստիճան: Աղյախտվ Հայ Եկեղեցու նվիրապետական համակարգը, ի գուգակշիր Բյուզանդական Եկեղեցու, նոյնպես օժտվեց ինը հոգևոր աստիճաններով [34]:

Ինչպես արդեն վերը նշեցինք, այդ ժողովի ժամանակ հայոց կաթողիկոս ընտրվեց Աքրահամ Արքաթանեցին (607-613), ով շարունակեց նամակագրությունը վրաց Կյուրիկն կաթողիկոսի հետ: 608 թ. գարնանը Սմբատ Բագրատունին հետ կանչվեց Պարսկաստան, մեծարվեց արքայի կողմից և կարևոր հանձնարարություններ ստանալով՝ զնաց հյուսիս-արևելյան Պարսկաստան: Սեբեոսը գրում է. «Եւ եղան յանցանել ծմերայն-ոյն, ի գալ գարնանոյն ժամանակի՝ հասամին սուրբանդակքն հրովարտակար, եւ կոչեն զնա մեծաւ շքեղութեամբ ի դուռն արքունի: Յայնժամ տայ ննա արքայ զտանուտքութիւն՝ որ անուանեալ կոչէր Խոտորվ Շում [35]: Տայ ննա զփողսն չորեքձայննանս եւ պահապանս դրանն նորա ի հետևակաց արքունի: գումարէ ննա մեծաւ ահեղութեամբ յարևելս յերկիրն Քուշանաց. եւ հրամայէ ննա առնել մարզպան՝ զոր ինքն կամսցի» [36]:

Սմբատ Բագրատունին հանձնարարեց Աքրահամ կաթողիկոսին շարունակել բանակցությունները Կյուրիկն հետ և հարկ եղած դեպքում գրել իրեն՝ արյաց արքային հայտնելու և հարկավոր հրաման ստանալու համար: Վրկանի մարզպանն զանում էր հայ-վրացական, բացառապես կրոնական հարցին տալ նրան քաղաքական նշանակություն [37]:

Սովում Ցուրտավացին Աքրահամ կաթողիկոսի ծեռնադրությունից միայն ուր ամիս հետո շնորհավորական նամակ ուղարկեց նրան, որի մեջ նշված էր նաև Դվինի ժողովին իր բացակա լինելու պատճառները: Նամակում Սովում Եպիսկոպոսը փառաբանում էր Սմբատ Բագրատունուն և Աքրահամ կաթողիկոսին կոչ էր անում վրաց ժողովրդին բերել ուղղադավանության: Այնուհետև Վրանես Քերոբողը հայոց կաթողիկոսին պատմեց այն ամենը ինչ տեղի էր ունեցել Սովում Եպիսկոպոսի հետ Վիրքում, պատմեց նաև նրանց գրած նամակների մասին, որոնք ուղղված էին վրաց իշխաններին և Պետրոս Եպիսկոպոսին: Այս ամենը լսելով, Աքրահամ կաթողիկոսը Սովում Ցուրտավացուն ուղղված իր նամակի մեջ հրավիրեց նրան Դվին, որպեսզի միասին

## ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

նշեն սուրբ Զատիկի տոնը՝ հիշեցնելով նաև, որ Սմբատ Բագրատունին ևս ներկա է գտնվելու [38]:

Ոգևորված Վրթանես Քերթողի և Մովսես Ցուրտավացու ասածներից՝ Աքրահամ կաթողիկոսը անհապաղ մի նամակ գրեց Կյուրիհոնին, որի մեջ ներկայացրեց իր բողոք-ները: Նախնառաջ՝ հայոց կաթողիկոսը անդրադարձավ Կյուրիհոնի տված խոստմանը, որը նա դրժել էր և հեռացել Հայոց Եկեղեցու հետ միաբանությունից: Այնուհետև Աքրահամն իր նամակում վեր համեց Մովսես Եպիսկոպոսի հանդեպ հարուցված հալածանքները, և սուրբ Շուշանիկին նվիրված պատարագի լեզուն փոխելու խնդիրը [39]: Կյուրիհոնը թեև խոստացել էր հավատարիմ մնալ հայ-վրացական հավատու միաբանությամբ, նա հետապնդումներ սկսեց Ցուրտավի Եպիսկոպոս Մովսեսի նկատմամբ՝ վերջինիս ուղղադավանության համար: Նրա փոխարեն Ցուրտավում վրացի Եպիսկոպոս նշանակեց և արգելեց սուրբ Շուշանիկին նվիրված հայերեն պատարագը [40]: Ավելորդ չենք համարում մեջ բերել նամակի այդ հատվածը. «Այժմ զՑուրտաւայ զԵպիսկոպոսն հալածեալ, թէ ընդէր խոստվանել հրամայեն զհաւատ ուղղափառութեան, և զպաշտանն հայերէն սրբոյ Շուշանկան զկարգաւորեալն՝ լսեմ թե ի բաց փոխեցէք: Մեզ՝ նահուչակի և ևս չարագոյն բուեցաւ գործը այդ» [41]:

Նույն նամակում Աքրահամ կաթողիկոսը ցանկություն հայտնեց Վիրք ուղարկել հայ Եպիսկոպոսների, որպեսզի նրանք հիշեցնեն դեռևս Կավաստ արքայի ժամանակ Ղվինում տեղի ունեցած Եկեղեցական ժողովի մասին, որտեղ հայ, վրաց և աղվանից հոգևորականները նգովեցին Քաղկեդոնի ժողովն ու Լևոնի տոռարձ և միաբանվեցին մեկ դավանանքի շուրջ: Իր խոսքին քաղաքական երանգ հաղորդելով՝ նամակի վերջում հայոց կաթողիկոսը գրեց, թե ինչպես ն կարելի է հավատական Բյուզանդիայի հետ, բայց գոտնվել Արքայից արքայի Ենթակայության տակ [42]:

Բացի Աքրահամ կաթողիկոսից Կյուրիհոնին նամակ ուղարկեց նաև Սմբատ Վրկանը, նշելով, որ Ղվինում տեղի ունեցած նոր կաթողիկոսական ընտրություններից հետո շտկվել են կրոնին վերաբերող բոլոր թերություններն ու հակառակությունները, և այժմ Արքայից արքայի տիրապետության տակ գտվող բոլոր հայերը միաբանվել են մեկ դավանանքի ներքո: Նա նշեց, որ պարտք է համարում գրել Կյուրիհոնին, որպեսզի Հայ և Վրաց Եկեղեցիները միավորվեն ինչպես նախկինում: Նամակի վերջում նա կրկնեց Աքրահամ կաթողիկոսի ասածը. «Կամէաք Եպիսկոպոսուն հանդերձ թերդողաւք արձակել, զկիրթան գիտել զարութիւն հերծուածոց, որ զճեզ ի վերայ հասուցանէին: Բայց ապա առ ժաման բաւական համարեցաք ծեռն ազատ արանցդ, նախ թղթով զկամս ծեր գիտել» [43]:

Կյուրիհոնը կետ առ կետ պատասխանում է Աքրահամ կաթողիկոսի նամակին: Սուրբ Շուշանիկին նվիրված պատարագին վերաբերող հարցին Կյուրիհոնը գրում է, որ նա չի արգելել հայերենով պատարագ անցկացնել, այլ քանի որ Ցուրտավում ապրում են նաև բազմաթիվ վրացիներ, նա կարգադրել է, որ պատարագը թարգմանեն նաև վրացերեն և ժողովրդին մատուցեն երկու լեզուներով: Եվ այդ պատճառով նա Ցուրտավում այնայիս Եպիսկոպոս է կարգել, որը երկու լեզուներին էլ ծանոթ է: Աքրահամի այն հարցադրմանը, թե ինչպես կարելի է լինել Բյուզանդիային հավատակից և միևնույն ժամանակ լինել պարսից արքայի տիրապետության տակ, Կյուրիհոնը պատասխանում է շատ ձկուն քաղաքագիտական մոտեցմամբ: Նա գրում է. «Մեր եւ ծեր հարքն արքայի ծառայք էին, և զհաւատ զԵղուսադեմի ունէին, և մեք և դուք նոյնապէս: Թեպես և ծառայք արքայից արքայի եմք, զհաւատ զԵրուսաղեմի ունիմք և կալցուք»: Նա ավելացրեց, որ պարսից արքան նաև Բյուզանդիայի տերն է և, հետևաբար, նրանք առանձին թագավորություններ չեն: Իսկ ինչ վերաբերում էր հայ Եպիսկոպոսների՝

## ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Վիրք գնալուն, Կյուրիհոնը գրեց հետևյալը. «Եւ որ գրեալ էր թէ կամէաք եպիսկոպոսուն արձակել, որ զային և ուսուցանէին. թէ կամիք արձակեցէք, թո՞ն զի զան որ ուսուցանեն և ուսանին» [44]:

Իսկ Սմբատին ուղղված նամակից երևում է, որ Կյուրիհոնը չէր ցանկանում լարվածություն ստեղծել և անընդհատ գովասանքի և փառարանության խոսքեր էր ուղղում մարզպանին և պարսից արքային: Այս նամակում նա գրում է. «Եւ այնո որ վասն հաւատոյ գրեալ էր, թէ հարդն մեր և ծեր ապաքան ունէին յորմէիստէ և սուրբն Գրիգոր գուղափառ հաւատ կարգեաց»: Հետո նա մեղադրում է Ցուրտավի եպիսկոպոս Սովուսին ստախոսության մեջ՝ գրելով հետևյալը. «Բայց ի մարտի պակասութիւն մի է. և մեծ է մարդոյ միոյ բանից հաւատալ ծեզ՝ որ իւր զիլսոյ չէր հաւատարիմ. թո՞ն թէ վասն մեր, որ վասն չար գործոյ իւրոց զաղտ ի գիշերի փախստական գնաց, և յապստամբս չոգաւ առ Վահրամ, և այնպէս չարութեամբ զիտաց առնել, զի սակաւիկ ինչ պիտեցաւ, և դեռ զքաղաքն առնուլ տայր, և Արեաց աշխարհի մեծ զիեան հասուցանէր» [45]:

Երբ Կյուրիհոնի պատասխան նամակները հասան Ղվին՝ Աբրահամ կաթողիկոսը, Սմբատը, Սովուս Ցուրտավացին և Վորանես Քերոբող այնտեղ էին գտնվում: Կարդալով նամակը՝ Սմբատ Բագրատումին սուտ համարեց իրեն ուղղված տողերը, և տեսնելով Աբրահամ կաթողիկոսին տված Կյուրիհոնի համարձակ և կտրուկ պատասխան մերը՝ հանձնարարեց հայոց կաթողիկոսին նամակագրության միջոցով փորձել փոխել Կյուրիհոնի վերաբերմունքը: Սմբատը ստիպված էր հեռանալու Ղվինից, քանի որ նրան շտապ կանչել էին պարսից արքունիք [46]:

Աբրահամ կաթողիկոսը 608 թ., Զատիկի տոնից առաջ, ծեռնամուխ է լինում Կյուրիհոնին ուղղված իր երկրորդ նամակը գրելուն: Այս նամակում նա Կյուրիհոնին փորձում է համոզել, որ նա մոլորության մեջ է ու շեղվել է ճիշտ ուղուց և կրկին հիշեցնում է հայ-վրացական դաշտական միաբանությունը. «Եկան մոլորութիւնն այս որպէս յառաջադյուն գրեցաք՝ եւ ի մեր աշխարհս առ Բարեկէնաւ Հայոց Կաթողիկոսի եւ առ Գարդիէլի Վրաց կաթողիկոսի. եւ միաբանութեամբ եպիսկոպոսաց եւ ազատորերոյ նգովեցին եւ ի բաց հեռացան ի միաբանութենէ մեծարելեացն զժողովն եւ զտոմարն հրէական. եւ այժմ գրով պահի առ մեզ [47]:

Սակայն Աբրահամ կաթողիկոսը համոզված էր, որ Կյուրիհոնի հետ նամակագրությունը ոչ մի օգուտ չի տա և ջանում էր ամեն կերպ հանդիպում ունենալ նրա հետ: Իր նամակի վերջում նա գրում է. «Ծնդ նմին պատմեա ինծ վասն տեղույ ի քո սահմանի, կամ ի մեր, որ յետ սրբոյ Զատկին զմիմեանս տեսանեմք. եւ եթէ առ սամ ինչ թիւրութիւն գտամի, թող զի աշխարհաւ յանդիմանի եւ մեք ամիսով պահիմք» [48]:

Աբրահամի այս նամակին Կյուրիհոնը կրկին շատ կտրուկ և ժխտական պատասխան է տալիս. Արդ՝ թէ միաբանութիւն և սէր կամիս պահել, և կեալ ընդ մեզ խաղաղութեամբ, որպէս հարդն մեր և ծեր կեցին, մեք պատրաստ ենք ի խաղաղութիւն: Իսկ եթէ այլ տարազ ինչ կամիք խորհել, աւելի աշխատ մի՛ լինիք, և յաղագս այդորիկ այլ մի գրէք առ մեզէ [49]: Նա իր նամակի մեջ մերժում է նաև Աբրահամ կաթողիկոսի կողմից առաջ քաշված հանդիպման առաջարկը:

Վրաց կաթողիկոսը ցանկանում էր հնարավորինս շուտ վերջ դնել այդ խոսակցությանը, քանի որ նա արդեն ստույգ կողմնորոշվել էր, թէ քրիստոնեական որ դավանանքին պետք է հետևի Վրաց ժողովուրդը: Իսկ Աբրահամ կաթողիկոսը չէր դադարում նամակագրությունը նրա հետ, քանի որ Սմբատ Բագրատումուց ստացել էր հստակ կարգադրություն՝ երկից և երիցսե գրել Վրաց կաթողիկոսին և արդյունքների մասին տեղյակ պահել իրեն:

Այս պատճառով Արքահամը իր երրորդ նամակը գրեց Կյուրիոնին: Նամակի սկզբում հայոց կաթողիկոսը փորձում էր Կյուրիոնի ուշադրությանը ներկայացնել Գրիգոր Լուսավորչի, հետագայում նաև Մեսրոպ Մաշտոցի կատարած սուրբ գործերը, որոնք նպաստել են երկու քոյլ Եկեղեցիների միասնությանը: Այնուհետև նա երկար խոսում է Քրիստոսի բնության շուրջ նշելով<sup>1</sup>. Սոյնական և երանելի հարքն որի ի Նիկիա ժողովին այսպէս ուսուցին ըստ առաքելոցն վարդապետութեան. Հաւատալ, ասեն, ի մի Աստուած ի Հայր ամենակալ. այլ ոչ երկուս բնութիւնս, կամ երկուս Որդիս ասացին, այլ զմի Տէր Յիսուս Քրիստոս՝ ծնեալ ի հաւրէ անձառաբար, և զնոյն մարմնացեալ, և մարդացեալ, և խաչեալ, և թաղեալ, յարուցեալ. և գայ ի դատել, որոյ թագաւորութեանն վախճան ոչ կայ...

Իսկ ի Քաղկեդովնի ժողովեալք՝ հակառակ առաքելոցն և սուրբ ժողովոյն, խոստովանեցին երկուս բնութիւնս ասելով միոյ Քրիստոսի, խաքելով զպարզամիտու, և փոխանակ Երրորդութեանն չորրորդութիւն քարոզեն... Եւ թէ ճշմարիտ էր ասացեալ ի ժողովոյն Քաղկեդոնի և ի Լևոնի տումարէն, ապա մինչ փառս տան, զի՞ չսեն Փառք Հաւր և Որդույ երկուց բնութեանցն և Հօգույն սրբոյ» [50]: Արքահամ կաթողիկոսը նաև կոչ է ամուս Կյուրիոնին նզովել Քաղկեդոնի ժողովն ու Լևոնի տոմարը. «Արդ՝ եթ չէք փոխեալ ի հայրենի հաւատոյ որպէս բազում անգամ գրեցեր առ մեզ, եկ նզովեա» և դու զանիծեալ ժողովն Քաղկեդոնի և զպիդ տումարն Լևոնի, որպէս նախնին քո երանելին Գարդիէլ կաթողիկոսն Վրաց նզովեաց ընդ երանելի հարսն մեր հանդերձ աթոռակցաւք իւրովք» [51]:

Հայոց կաթողիկոսը անդրադարնում է նաև Ցուրտավի եպիսկոպոս Մովսեսի խնդրին: Կյուրիոնը Արքահամին ուղղված իր պատասխան նամակում գրել էր, թէ ինչու Մովսեսը համաձայնեց եպիսկոպոս ծեռնադրվել, եթե իրեն ծեռնադրութերը ուղղափառ չէին: Այս հարցադրմանն Արքահամը պատասխանեց հետևյալ կերպ. «Երդմանը հանդերձ հաստատեաց զայտ տեղի, թէ չգիտէաք, բայց զի յետ ծեռնադրութեանն ծանեաք. որ և մեզ կարի հաւատալի թուեցաւ. քանզի չգիտէր ոք յուղակիառաց սույց զայտ այդպէս: Վասն զի և երանելին Մովսես որ յառաջ քան զիս յառաքելական աթոռս յաջորդեալ էր, չգրեաց այնպէս, թէ դուք չէք ուղղափառք, այլ թէ ընդ չուղղափառսն ընդէր հաղորդեցայք» [52]: Իր նամակի վերջում Արքահամը հոյս հայտնեց, որ եթե այս անգամ Կյուրիոնը համաձայնվի միավորվել Հայոց Եկեղեցու սուրբ դավանանքի հետ՝ նրանք կիանդիպեն [53]:

Վարց կաթողիկոսը հայտնվել էր անհարմար իրավիճակում, քանի որ նրան շահավետ էր խաղաղություն պահպանել հայերի հետ՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ պարսից արքան նվազումներ էր կատարել Բյուզանդիայում: Մյուս կողմից՝ բարիդրացիական հարաբերությունները Հայոց Եկեղեցու հետ թշնամանք կառաջացնեին Վրաց և Այուվանդական Եկեղեցիների միջև [54]:

Զնայած որ Կյուրիոնը իր երկրորդ նամակի մեջ գրել էր. «յաղագս այդորիկ այլ մի գրէք առ մեզէ, այնուամենայնիվ նա չզլացավ և կրկին պատասխան նամակ ուղարկեց Դվին, որի մեջ նախ մեղադրեց Արքահամին՝ իր հանդեպ անհարգալից վերաբերմունք ցոյց տալու համար: Նա գրեց հետևյալը. «Զի դուք այնպէս գրէք առ մեզ, որպէս առ նորատունկու և նորահաւատու, եւ չգրէք այնպէս, որպէս արժանն է առ պատուականս եւ առ միշտ ուղղափառս: Զի այսաւր ողորմութեամբն Աստուծոյ եւ քան զամենայն Երկիր յառաջադիմ ենք մեր եւ ուղղափառ, թող դի քան զսակաւ ոմանսէ» [55]: Այնուհետև վրաց կաթողիկոսը գրեց, որ Արքահամին նախորդող Մովսես կաթողիկոսի հետ նա բարեկամական հարաբերությունների մեջ էր, և այդ ամենը տևեց այնքան ժամանակ,

## ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

մինչև որ ինքը Վրաստանում ընդունեց նեստորակամների, որոնք հետագայում հրաժարվեցին նեստորականությունից և որդեգրեցին վրաց դավանանքը: Նա գրում էր նաև, որ մինչև Աբրահամ կաթողիկոսի աթոռակալելը վրաց և հայոց ժողովուրդները ունեին միևնույն դավանանքը, բայց Ցուրտավի Եպիսկոպոս Սովունդ մոլորեցնող խոսքերին հավատալուց հետո Աբրահամը սկսեց կասկածել վրաց ժողովուրդի ուղղադավանությամբ [56]:

Կյուրիփոնը իր նամակում ներկայացնում է նաև չորս տիեզերական ժողովները, որոնք ներառված էին՝ չորից ժողովոց գիրք կոչվող աշխատության մեջ, որը նա թարգամնել էր տվել Երուսաղեմում: Այդ առթիվ նա գրում է. «Եթէ զհաւատս մեր կամիք քննել եւ գիտել, եսու թարգմանել եւ բերել զգիրս չորից ժողովոցն, որով Հոռոմք վարին, եւ ի սուլր Անաստաս, եւ ի սուլրն Սիուն նոյն քարոզի. Եւ եթէ կամիք եւ եթէ չկամիք հաւատս մեր այդ է» [57]:

Իր նամակի վերջում Կյուրիփոնը Աբրահամ կաթողիկոսին առաջարկում է ընդունել այդ ճշմարիտ դավանությունը, որին հետևում է ինքը և վրաց ժողովուրդը. «Կնքեցաւ, եւ զայս ամենայն վասն ծեր շինութեան գրեցար ամենայն ճշմարտութեամբ, եւ ոչ եթէ սակաւ քննութեամբ, այլ մեծապէս աշխատեցաք եւ ծանեաք, զի այս է ճշմարիտ հաւատս: Եւ դուք ճշմարտութեամբ հաւատացէք զարդար հաւատս զայս, եւ մի՛ դեղեւելով եւ անդր ակնանիցիք. Գիտացէք զի իրաքանչիւր ոք ի մէնց համարս տալոց եմք դատաւորին յաւուրն մեծի» [58]:

Այսպիսով՝ զուր անցան հայոց հայրապետի բոլոր ջանքերը՝ երկու ազգերի սերն ու փոխադարձ բարեկամական հարաբերությունները պահպանելու համար: Կյուրիփոնը վճռականությամբ առաջ տարապ իր սկսած հեղաշրջումը: Նրա համար ավելի կարևոր էր վրացական Եկեղեցին քաղկեդոնականության ծոցում ազգային ինքնորոշման մի խոշոր գործոն դարձնել, ինչպիսին հայկական Եկեղեցին էր դարձել միաբնյա դավանականության առանձնացած ծոցում [59]:

Հայ և Վրաց Եկեղեցիների միջև պաշտոնական բաժանումը տեղի ունեցավ 608 թ. վերջերին: Ուխտանեսը տալիս է Երեք հիմնական պատճառ, ըստ որի՝ տեղի ունեցավ այս բաժանումը: Առաջին պատճառը Վրաց կողմից քաղկեդոնական դավանանքի ընդունումն էր: Երկրորդ պատճառը իննաստիճան հոգևոր դասակարգման խնդիրն էր, իսկ Երրորդը՝ նախնիների ավանդությունը [60]:

Աբրահամ կաթողիկոսը, կորցնելով Կյուրիփոնի հետ հաշտություն կայացնելու բոլոր հովաները, մի շրջաբերական թուղթ գրեց, որը և համարվեց նրա առաջին կոնդակը: Այդ կոնդակով նա պատվիրեց հայերին կուրել բոլոր հարաբերությունները վրացիների հետ: Ավելորդ չենք համարում մեջ բերել այդ կոնդակից մի հատված. «Եւ պարծանաւք խրիստացեալ ոչ թողով զաղանդն. Այլ եւ զմեզ զկնի իրեանց թիւրեալ խորխորատն ուսուցանել համարձակեցաւ ամբարիշտն Կիւրոն: Վասն որոյ եւ զյարօջագոյն սահմանն վարդապետացն մերոց, զոր ի վերայ Հոռոմին հատին, եւ կացցէ մինչեւ ցրուն, թէ ոչ դարձցին ի ճշմարիտն: Մեք զնոյն եւ ի վերայ Վրաց հրամայեցաք, ամենեւիմբ մի՛ հաղորդել ընդ նոսա, մի՛ յաղաւթ, եւ մի՛ ի կերակուրս, եւ մի՛ յըմպելիս, մի՛ ի բարեկամութիւնս, մի՛ ի դայեակութիւնս, մի՛ աղաւթիք երթալով ի խաչն, որ ի Մծխիթայի տեղաւքն համբաւի, մի՛ ի Մանգղեաց խաչն. Եւ մի՛ ի մեր Եկեղեցիս զնոսա ընդունել, այլ եւ ամուսնութեամբ ամենեւիմբ հեռանալ. բայց միայն զնել ինչ, եւ կամ զնոյ տալ որպէս իրէից: Նոյն հրաման եւ վասն Աղուանին ամշարժ կացցէ, զի պատկառեալ դարձցին ի թիւր ճանապարհէն» [61]:

Սակայն Աբրահամ կաթողիկոսի արգելքներն ու նզովքը մեծ արժեք չունեին հայվրացական փոխադարձությունների մեջ: Եկեղեցական կատարյալ համաձայնութ-

## ՄԵՍՐՈՊ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

յան և դավանակցության կապերը շարունակեցին գոյություն ունենալ և Աքրահամի ու Կյուրիինի ժամանակներից հետո: Նոյնիսկ հետազայում եկեղեցական միությունը նորից վերականգնեցու փորձեր եղան, սակայն դրանք անհաջող էին: Այսպես շարունակվեց այնքան ժամանակ, մինչև վրացական եկեղեցին վերջնականապես ընկավ հունական եկեղեցու ազդեցության տակ և սկսեց թշնամնք տածել դեպի Հայոց եկեղեցին: Այս վերաբերմունքի առաջին պաշտոնական արտահայտությունն էր Ռուս-Ուրբանիսի եկեղեցական ժողովը, որը տեղի ունեցավ 1103 թ. և որտեղ վրաց եկեղեցականությունը Հայոց եկեղեցին հերետիկոսական հայտարարեց: Այնուհետև նրանք փորձում էին ջնջել բոլոր հիշատակարանները, որոնք անհերքելի ապացույցն էին այն բանի, որ վրացիները ժամանակին հայերի դավանակիցներն էին և նրանց հետ միատեսակ պաշտամունք ու ժես ունեին [62]:

Այսպիսով՝ Հայոց և Վրաց եկեղեցիների միջև շուրջ երեք հարյուր տարվա դավանակցությունը տիտուր հանգուցալուծում ստուգավ: Հայոց և Աղվանից եկեղեցիները շարունակեցին պահպանել իրենց ուղղադավան միությունը, իսկ Վրաց եկեղեցին դարեր շարունակ մնաց Բյուզանդական եկեղեցու ազդեցության տակ:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Դանիելյան Է., Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ Առաքելական եկեղեցին (VI-VII դարեր), Եր., 2000, էջ 93:
2. Սեբեոս, Պատմութիւն, քննական բնագիրը՝ Գ. Արգարյանի, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Գ. Խաչատրյանի և Վ. Եղիազարյանի, (այսուհետև՝ Սեբեոս), Եր., 2005, էջ 112-113:
3. Յովհաննու կաթողիկոսի Ղրասխանակերտեցոյ Պատմութիւն Հայոց, (այսուհետև՝ Հովհաննես Ղրասխանակերտցի), Եր., 1996, էջ 72:
4. Վարդանյան Վ., Հայոց եկեղեցին վաղ միջնադարի քաղաքական խաչուղիներում, Վաղարշապատ, 2005, էջ 275:
5. Ակինյան Ն., Կիւրոն կաթողիկոս վրաց, Վիեննա, 1910թ., էջ 160:
6. Հովհաննես Ղրասխանակերտցի, էջ 73:
7. Ուխտաննես Եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Մատենագիրք Հայոցե, ժԵ հատոր, Ժ դար (այսուհետև՝ Ուխտաննես), Լիբանան, 2010, էջ 510:
8. Գիրք Թղթոց, Մատեանագրութիւն նախնեաց, Թիֆլիս, 1901, էջ 146-148:
9. Սեբեոս, էջ 120:
- 10.Տէր-Մինասեան Ե., Հայոց եկեղեցու յարաբերութիւնները ասորուց եկեղեցիների հետ, Ս. Էջմիածին, 2009, էջ 113:
- 11.Ակինյան Ն., նշվ. աշխ., էջ 164-168:
- 12.Ուխտաննես, էջ 510-511:
- 13.Ակինյան Ն., նշվ. աշխ., էջ 169:
- 14.Լեռ, Հայոց պատմություն, հատոր Բ, Եր., 1967, էջ 227:
- 15.Ուխտաննես, էջ 511:
- 16.Վարդանյան Վ., նշվ. աշխ., էջ 276-277:
- 17.Ուխտաննես, էջ 515:
- 18.Նոյն տեղում:
- 19.Джавахов И., История церковного разрыва между Грузией и Арменией в начале VII века, "Известия Императорской Академии Наук", СПб., 1908, стр. 527.
- 20.Վարդանյան Վ., նշվ. աշխ., էջ 278:

## ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ՂՈՒՏՈՒ 2018

- 21.Դյավախօս Ի., յկազ. սոչ., ստր. 514.
- 22.Վարդանյան Վ., նշվ. աշխ., էջ 279-280:
- 23.Ուխտանես, էջ 536:
- 24.Նույն տեղում, էջ 540-541:
- 25.Լեռ, նշվ. աշխ., էջ 227:
- 26.Օտար աղբյուղները Հայաստանի և հայերի մասին, հ. 5, բյուզանդական աղբյուղներ Ա, „Պրոկոպիոս Կեսարացիե, թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Բարթիլյանի, Եր., 1967, էջ 142:
- 27.Ուխտանես, էջ 537:
- 28.Փաւստոսի Բիւզանդացւոյ, „Պատմութիւն Հայոց, բնագիրը Ք. Պատկանյանի, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Եր., 1987, էջ 24:
- 29.Գիրք Թղթաց, էջ 132:
- 30.Նույն տեղում, էջ 149-150:
- 31.Վարդանյան Վ., նշվ. աշխ., էջ 280-281:
- 32.Նույն տեղում, էջ 283:
- 33.Ուխտանես, էջ 551:
- 34.Վարդանյան Վ., նշվ. աշխ., էջ 288-289: Տե՛ս նաև Ուխտանես, էջ 595-597:
- 35.Նշանակում է՝ Խոսրովի ուրախություններ:
- 36.Սեբեոս, էջ 120, 122:
- 37.Լեռ, նշվ. աշխ., էջ 231:
- 38.Ուխտանես, էջ 558-559:
- 39.Ակիմյան Ն., նշվ. աշխ., էջ 230-231:
- 40.Babian G., The relations between the Armenian and Georgian Churches, according to the Armenian sources, 300-610, Antelias-Lebanon, 2001, p. 213-214.
- 41.Գիրք Թղթաց, էջ 164:
- 42.Babian G., p. 214.
- 43.Գիրք Թղթաց, էջ 168-169:
- 44.Նույն տեղում, էջ 167:
- 45.Նույն տեղում, էջ 171:
- 46.Ակիմյան Ն., նշվ. աշխ., էջ 236:
- 47.Ուխտանես, էջ 565:
- 48.Գիրք Թղթաց, էջ 177:
- 49.Նույն տեղում, էջ 179:
- 50.Նույն տեղում, էջ 181-182:
- 51.Նույն տեղում, էջ 182:
- 52.Նույն տեղում, էջ 184:
- 53.Նույն տեղում:
- 54.Babian G., p. 226.
- 55.Ուխտանես, էջ 573:
- 56.Babian G., p. 227.
- 57.Ուխտանես, էջ 573:
- 58.Գիրք Թղթաց, էջ 188:
- 59.Լեռ, նշվ. աշխ., էջ 232:
- 60.Ուխտանես, էջ 593-597:
- 61.Նույն տեղում, էջ 607-608:
- 62.Լեռ, նշվ. աշխ., էջ 232-233:

**ԱՄՓՈՓԱԳԻՐ**

**Վրաց Եկեղեցու անջատումը Հայոց Եկեղեցուց  
Արմեն Տեր-Գրիգորյան**

VII դարի սկզբին Վրաց Եկեղեցին միացավ Բյուզանդական Եկեղեցուն, խզելով դարավոր միությունը Հայոց Եկեղեցու հետ: Այս պարակտոման գլխավոր նախաձեռնողն էր Վրաց կաթողիկոս Կյուրիոնը: Հայ հոգևորականությունը և Սմբատ Բագրատունին փորձեցին կանխել Կյուրիոնի մտադրությունը, բայց ապարդյուն: Հայ-Վրաց Եկեղեցիների բաժանումը տեղի ունեցավ 608 թ.: Այս երևույթը կարելի է մեծ կորուստ համարել Երկու ազգերի համար, քանի որ դավանական պարակտումը Երկու Երկրներին իրարից վանող ազդեցություն ունեցավ հետագա դարերի ընթացքում:

**РЕЗЮМЕ**

**Разделение Грузинской церкви от Армянской  
Армен Тер-Григорян**

**Ключевые слова:** Кюрион, Мовсес, Цуртав, Авраам, Шушаник, Персия, Смбат Багратуни, Вркан.

В начале VII века Грузинская церковь присоединилась к Византийской церкви, разрушив вековое единство с Армянской церковью. Главным инициатором этого раскола был грузинский католикос Кюрион. Армянское духовенство и Смбат Багратуни пытались предотвратить намерения Кюриона, но напрасно. Разделение Грузинской церкви от Армянской произошло в 608 году. Этот феномен можно считать большой потерей для двух наций, потому что конфессиональный раскол оказал отделяющее влияние на две страны на протяжении веков.

**SUMMARY**

**Separation of Georgian Church from Armenian Church  
Armen Ter-Grigoryan**

**Keywords:** Curuon, Movses, Tsurtav, Abraham, Shushanik, Persia, Smbat Bagratuni, Vrkan.

At the beginning of the VII century the Georgian Church united with the Byzantine Church, breaking the age-old unity with the Armenian Church. The main initiator of this division was Georgian catholicos Kyurion. Armenian clergymen and Smbat Bagratuni tried to prevent Kyurion's intentions but all was in vain. The separation of the Georgian Church from Armenian occurred in 608. This phenomenon can be regarded as a great loss for the two nations because the confessional split has had a mutilated effect for two countries for centuries.